



## 24. ՅԱՐԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐ

Կիլնը մեկ պառավըն, ուր էրկու լաճ, էրկու խարս: Պառվու մեկ լաճ կերթա Ստամբիլ:

Ան մեկ էօր կըսը. – Խարսիկ, իս կերթամ ճըրհ, փեթաքյըմ կուրիկ գի շուռ կը տամ մաշ հօդին, համա չուր իս գամ, մեկ խատ զըրզնիս, հըմեն քաղիս, լըցիս ուր տեղ: Որտա մեկ մընա, գամ զգըի ըսպանիմ:

Խարսն էլ շատ կը լա: Անու տալվ կը գա մհտ, կըսը. – Ախ-չո՛, Վորե՞ ընցկընա կը լաս:

Կըսը. – Ապա իմ կիսուր կըսը՝ նա կուրիկ զըմեն ժողվը: Մեկ խատ գյետին մընա, իս գամ, զգըի տը սպանիմ:

Տեգյերկնիկն էլ կը գա, մե մեկ քասե՞ն կը պըռնին անունց ձեռ, ըգկուրիկ հըմեն կը լըցին փեթաքյ:

Տեգյերկնիկ կըսը. – Իս տ'իյամ, իմ լաճ կը լա, նա մընացած զըմեն ժողվիս:

Տեգյերկնիկ կերթա տուն, կըխը պառավ հախապըրեն կը գա:

Ան էլ համա լազ կը գա մատ խարս, կըսը. – Աստծու սիրուն ըլնը, քիւ կիսուր իրը, մեկ-մեկ տէւ չուր յի՞փ տը ժողվիս:

Տէւր կը պանա, խավիր կը թըղնի վերա, մեկ խատ ի՞նչ ը՝ խավիր ըն թըղնի գյետին:

Պառավ կը գա, կը տեսնա՝ մեկ խատ չըկա գյետին, կըսը. – Դա՞յ սիվ կապիս, նա քիւ քարամաք չը, քիյ տաս տըվող կա:

Պառավն էլ կը ոթկը, թուխթըմ կիրաղկը ուր լաճուն, կըսը. «Արք, ալ իս չըմ կանա խա քիւ կընկան ընցըցը: Քիւ կնիկ անցկուն օռոսապը իլիր, ալ քիւ էրկիր անցկընա չըկա»:

Լաճն էլ համա կիլնը, Ստամբիլա կը գա: Ինչ ան կը գա տուն, լաճու կնիկ լալելեն կը գա մա տեգյերկնիկ:

Տեգյերկնիկ կըսը. – Վըրե<sup>14</sup> կը լամ:

Կըսը. – Վոլա՛, իմ իրիկ իրը, պառավ ծի տը տա սպանիլ:

Տեգյերկնիկ համա կը գա մա տեգյըր:

Կըսը. – Վըրե<sup>14</sup> քիւ կնիկ կը տըփիս: Քիւ կնիկ օռոսապը չը, պառավու աչք բահըր չըպանը, իրիկ կը պը անու:

Մընաց չուր իեվարին, լած կիրաղկը, մեր կը պիրը:

Կըսը. – Պառա՛վ, տիւ ի՞նչ կուզիս խարսնիրուց:

Պառավ կըսը. – Չա չէ՛, տիւ քիւ կնիկ առ, պառկը հանդե, ան ուր կնիկ առնը պառկը հանդե, իս խիղճ, շեվար, անիրիկ պառկիմ հըստա:

- Պառա՛վ, չէ՛ տիւ պառվացիր իս, քիւ ատամքյիր թափիր ը, ալ տիւ իրիկ ի՞նչ տ'անիս:

Պառավն էլ կըսը. – Յան տիւ ըզձը տը տաս իրկան, յան իս կարհւ չըմ անը:

- Պառա՛վ, մարթ ըզքյի չառնը, Աստծու սիրուն ըլնը:

- Չէ՛, իլահ, տիւ ըզձը տը տաս իրկան:

Ա.Ծ էլ կը նահլաջանա, կիլնը, ըզպառավ կը տընը մաչ կողվին, կը շըլկը, կը տանը սար վե, կը թըղնը հանդե, կը գա:

Շեվար կը տա վերա: Պառավ կիրիշը՝ մարթ չկա:

Կըսը. – Տե՛ր Աստված, ապա նա խելի մարթիր չիկին, յի՞փ տը գան, ըզձը տանին:

Կը տեսնա՝ երկու-իրիքյ գյել հան կընարեն կը գան: Գյելիրու աչկիր կը պըսան, անու մըտովկեն՝ մում ին:

Ա.Ծ էլ կիլնը, կը կայնը, ուր կապեն կը խանը, կը պըղնը ծեռ:

Կըսը. – Իկի՞ն, իկի՞ն մումդանքըտերով, իկի՞ն, իկի՞ն շամդանքյտերով:

Գյելիր կը գան, կը խասնին թախս պառավ, թուշ կը գարկին պառվու ճուռ:

Պառավ կըսը. – Խոզյին, կըծիկ-մըծիկ մ'անե՛քյ, պաճիկ-մածիկ արե՛քյ<sup>14</sup>:

<sup>14</sup> Կծիկ-մծիկ մանեքյ, պաճիկ-մաճիկ արե՛քյ- մի՝ խածնեք, պագեցե՛ք (Ծ. Բ.):

Ըգպառավ կը փութքըկին, կուտին:

Կը մընա առավոտան, լած կըսը. – Մըհա երթամ սար, իմ  
մեր ի՞նչըխ էլավ:

Կը գա, կը տեսնա՝ պառավ չըկա: Յիտիվ կան կը գա, չո-  
տեսնա պառավ: Լած լալելեն կերթա գյեղըմ: Կը տեսնա պառա-  
վըմ նստիր հանդե:

Կըսը. – Պառավ, ծի մերըմ կեր, սար վե իրիկ արավ:

Պառավ կըսը. – Խոգին, թի սար վե յը, անիկ գյելիրն ը  
կերած:

Լաճն էլ կըսը. – Իս ի մոր սալըխ առը, ջահնամ, ալ իմ սեռտ  
չըմնա խիտ:

Լաճ կիլնը, կը գա տուն: Լաճուն ախաբերագյիրըմ կըլնի:  
Ախաբիր աչկն էլ վար լաճու կընկան կիլնը:

Ուր կընկան կըսը. – Գյընա՛, իմ ախաբիր կնիկ պի՛ մի տուն  
մեհվան:

Կնիկ կերթա, կը կանչի, կը գա ուր տուն մեհվան:

Կընկան կըսը. – ճա՛շ իփը:

Ա.Ն մարթիւն էլ կատու՛մ կիլնը:

Կատուն ուր խանըմուն կըսը. – Տհւ հերքոկիցիր, ճա կնիկ  
պիրիր, ճա կնիկ տ'իլնը քիւ գյըլխուն գավանիկ:

Ճաշ կը տընը հիօծիվ, խարս ճաշ կուտը, կը պըոծընը:  
Մարթն կը կանչը, կը տանը ուր հօդեն, կըսը. – Խարսնիկ, իս  
ըզբյի կուգիմ:

Կնիկն էլ կըսը. – Իմ իրիկ, տիւ ախաբեր եքյ:

Կըսը. – Ախաբեր չըխո զախաբիր խեր կը քիւնը:

Կնիկ կըսը. – Խարիր տարը մընա, իս ան թերախտութին չըմ  
անի խատ իմ իրկան:

Մարթ չկանա պա մ' անը: Կնիկ կիլնը, լալելեն կը գա տուն:

Տեգյերկնիկ կըսը. – Վըրե՛ կը լաս:

Կըսը. – Իմ իրկան ախաբեր ծի կըսը՝ իլահ, քյը կուգիմ:

Տեգյերկնիկ կըսը. – Տհւ նըստը՛ ըստա, իս լազ երթամ մատ  
էն մարթ:

Կնիկ էլավ, ըգտեգյերկընկան խալավ խագավ, լազ գյընաց:  
Կը տեսնա՝ մարթիւ կնիկ կերթա ծըրիւ:

Կըսը. – Ախչը՛, քիւ իրիկ գի տո՞ւն ը:

Կըսը. – Իմ իրիկ գի տուն ը, ճաշ կուտը:

Կատուն հառեճից համա վազկից, իրի մա կնիկ, էսաց. — Շուտ տարօք իրի, նա կնիկ ըգբյի տը տա կորսըցըցիլ:

Կնիկ գյընաց, խասավ խատ մարթ, գյըտել ծեռնեն խըլից:

Մարթ էսաց. — Կնիկ, ընցկընեմ ժամանակ իմ կնիկ չկարոցիր իմ գյըտել իմ ծեռնեն խըլեր, տիւ վըրե՞ խլիցիր:

Էսաց. — Խոզին, խիղճ կնիկ հնկյիր քիւ ծեռ, իս քիւ տեղ էլեներ, անու ծեռաց կորյովն է չըր ուտե, խարամ ը:

Էսաց. — Ի՞նչըլս անիմ:

Էսաց. — Պի՞, քիւ կնիկ տու կորսըցըցիլ: Իս էլ իմ իրիկ տամ սպանիլ, ուտինքյ, խընինքյ, մի քյեֆ անինքյ: Իլնինքյ իրիկ, կնիկ:

Էսաց. — Իմ կնիկ շեվար կնիկ մը:

Էսաց. — Քիւ կընկան յար կա, տիւ չըս գյըտը: Ինչ տիւ կը քյընիս, կանտով սութ քիւն իլի մըհա:

Ա.Ա էլ գյիշիր սութ քիւն կը տընը վար ուր, կը տեսնա՝ կնիկ ծեռ կը տա գյըլիս, հիրար կը տա, գի իրիկ քյընիր ը:

Կըսը. — Ախե՞ շ, իմ իրիկ քյընիր ը, իս տ'ըլնիմ, յամ:

Կիլնը, ուր սընդուկ կը պանա: Ուր աղեկ խալավքյիր կը խագյընը, միամիտ ծեռ կը տա հօդի՞ն, տիւր կը պանա մաչ ուր տան:

Իրիկն էլ գաղտիկ կիլնը, մութ իինի, կիլնի հիտիկ կընկան: Կը յա, կը մըտնը դիլար վե, զինքյ կը պաղկըռվացցը:

Կնիկ ծեռ կը տա ներքյին դըփօ պերան, կը վըրօց, խուրըն կա հանդե. ան էլ կը մտնը հանդվե: Մարթն էլ կերպա գաղտիկ հիտիկ: Կը տեսնա՝ ան կընարեն տիւրըն կը պացվը, արաքըն կը գա:

Են կնիկ մե մեկ կը գյըրկին, կերպան հօդեն: Իրիկն էլ էնտել թամաշա կանը:

Կնիկ կըսը. — Արա՞բ, իմ իրիկ վար ծի կնիկ էլ կանը:

Արաբ կըսը. — Օր քիւ իրիկ ատարգ թերախտ ը, թի կուզիս, ըգբյւ իրիկ սպանիմ:

Կնիկ կըսը. — Զի կատու՞ն կա, համեն խըլիսուն կը գա, կինի իմ վուտքյիր, կը նըվա, կըսը՝ քիւ իրիկ ըգբյւ տը սպանը:

Արաբ կըսը. — Իս զան կը սպանիմ, վըրե՞ ան ըգբյի սպանը:

Մարթ համա կը վախանա, գաղտիկ կիլնը, կը գա ուր տեղ, կը պառկը: Կըսը. «Ահե իլնը, ալ իս հիւրիւշ կնիկ չըպանիմ ծի յար, քանը օր իմ սեռս վար իմ կընկան մըրմոաց: Օր տա իմ կնիկ

շեվար էր, անու տակ նատարգ պանիր կա, չըխո իմ կնիկ ծի ոց չըկըտրօ»:

Մարթ կիլնը, կըսկըծու զգկատուն կը սպանը:

Կնիկ կը գա, կիրիշը՝ կատուն սպանած, թալած հանդե:

Ա.Ն էլ կերթա մատ արաք, կըսը. – Դասօր գյիշիր արը՝ խատ իմ իրիկ: Ի՞նչըխ ան իմ կատուն սպանիր, տիւ յէլ գան սպանը:

Իրիկ կը մընա հաշար, կնիկ կը քյընը: Ա.Ն էլ ուր կընկան խանըլ կը խագյընը, կիլնը, կերթա մատ արաք: Երթալիւ պես, չէ՝ սկվրիր, գյինին կը լցօք, կը տա արաքիւ ծեռ:

Ա.Ր. անցկուն կը խընը, հաշ կերթա, ան էլ կը զարկը, զարաք կը սպանը: Կիլնը, կը գա, կիրիշը՝ կնիկ քյընուկ ը:

Կըսի. – Կնիկ, իլի՝ յանք նա հօդեն վե, ծի խըզմաթ կա խա քյի:

Դողը տիւռ կը պանա, կնիկ կը տանը հօդեն վե:

Կըսը. – Կնիկ, ալ մա նա հօդին հիւրիւշ տիւռ կա”, թի” չէ:

Կնիկ հերտիւմ կանը, կըսը. – Թիւ տիւռ չկա:

Ա.Ն էլ համա դրփ կը վիրուցը, խուրու պերան կը տեսնա: Ինչ խուրու պերան կը պանա, կընկան կըսը. – Գյընա՛ խուր վե:

Կնիկ կըսը. – Վոլա՛, իս չըմ գյըտը ճամբախ, տիւ յէլ արը խա ծի:

Զիրիկ կը տանը, կըսը. – Դե՛, տիւ կաց նա դիլար վե:

Ա.Ն էլ կերթա մատ արաք, կը տեսնա՛ զարաք սպանած:

Դամա կնիկ ուր տեղ իինը կը կըժա, մարթ կըսը. – Կնիկ, ատ ի՞նչ էլավ:

Կըսը. – Աստված քիւ տուն ավոը, վոլա՛, գիմ արաք սպանած ին:

– Կնիկ, չուր մըկա տիւ հերտիւմ կաներ, կըսեր՝ ծի յար չըկա:

Կնիկ կըսը. – Թիւ ծառ չըկա՝ ինչ քամը չառնը:

Լալելեն զինք կը թալը իրկան փողպատ:

Կըսը. – Կնիկ, շա՞տ անուշ ը յար պըռնիլ:

Կըսը. – Ա.իդ իլնը, ալ իս թոշար յար չըպըռնիմ: Իս չըր գյըտե ախշար անցկընա բերախտութին կեր:

Մարթն էլ համա լազ կը գա մա պառվու խարս:

Պառվու խարսին կըսը. – Արը՛, տիւ կըսեր՝ քիւ կընկան յար կա, իս չըր ավատե:

Պառվու խարսն էլ կիլնը, կը գա մարթիւ տուն: Կը պառկը խատ ան մարթիւ կըշտին գյիշիր: Անու կնիկ կակախը, կը քյըսքը, կիրիցը:

Կըսը. – Նատարգ պան էլ կա՝ մարթ գա, պառկի իմ իրկան ծուց:

Կնիկ կը պըտպըտա վար իրկան, կըսը. – Քյաֆը՛ր կնիկ, իս քանձ ան արար չըր իլնը, տու կերթեր, կուր կըլներ անու կուշտ:

Կնիկն էլ համա կը վազկը մա պառվու լաճ, կըսը. – Վոլա՛, թիւ կնիկ գի մատ իմ իրիկն ը: Աստծու սիրուն, դալիլը տիսի:

Մարթն էլ կիլնը, կը վազկը, կը գա, կնիկ զան կը պախս դիլար վե: Կը տեսնա՝ իրիկուն անու կնիկ կը գա, պառկը ախափր ծուց: Ա.Ա էլ համա նիտ-անեղ կը զարկը, զուր կնիկ կը սպանը:

Մարթ կակախը, կիրիշը՝ յար խա կըշտին սպանուկ ը:

Կըսը. – Ա.Ի. իլնը, վար պառվու խարսին վե, ալ իս թիւ յար չըպջոնիմ:

Պառվու լաճն էլ կիլնը, կը գա տուն:

- Ե՛, – կըսը, – իմ ծեռ կուտրեր, իս իմ կնիկ չըսպաներ, իս իմ ախափեր սպաներ:

Կիլնը, լաճ կիրիղկը հիտիվ ուր ախափր կընկան, կըսը. – Ախափր կնիկ, իս իմ կնիկ սպանիցը, համա փիշմընա իմ սպանիլ: Խոզկե իս իմ ախափերազյիրն էր սպանիր, ո՞նչ իմ կնիկ:

Ա.Ա էլ կըսը. – Օր տա քի կը պը, իս կանամ զան տամ սպանիլ:

Դամա լաճ ուր սհւս կը տա, կիլնը, կերթա մատ ան մարթ:

Ախափեր կը տեսնա՝ պառվու մեկել խարս իրի:

Ա.Ա մարթիւն կըսը. – Արը՝ յանք մի տուն, ծի խըզմաթ կա խա քի:

Կը պիրը, կը մըտուցը թիներ վե: Ա.Ա էլ համա կաշի՛մ կը թալ վար թիրվան պերնին:

Տըրկըցը կընքըտիր տը գան տուն, կնիկ կըսը. – Ալահ վոքյիլ, տը տեսնան, կըսին՝ նա կընկան յար կա:

Ա.Ա էլ կիլնը, աղու՛մ կուտ կը թալ վար թիրվան կաշուն, խավիր կը թըղնի վերա:

Թըփթըփուց կը գա:

Լաճ թիներ վե կըսը. – Աստծու սիրուն, նա ի՞նչ ծեն ը կը գա:

Կըսը. – Խաքար մի՛ տա, խավե խեծիլ, իլի՛, գախն ը՛ ախ-  
շար ավոց, կաց քիւ տեղ, հիրար մ'առնի:

Զան կը թզնը թհներ վե, կը վազկը մա տեգըր:

Կըսը. – Դե արը՛, գի՛ թհներ վե, զա՛ր, սպանը՛, մհտեն  
ազատվը՛:

Ա.Ն էլ կը զարկը, զախաբեր մա թհրվան կը սպանը:

Տըրկըցտիր կակախին, կը գան, կըսին. – Կճիկ, նա ի՞նչ  
մարթ էր՝ սպանըցիքյ: Մինքյ մըկա տ'իյանքյ, Ամբըրին խաքար  
տանքյ:

Կերթան, Ամբըրին խաքար կը տան, կըսին. – Մարթըմ պիրի,  
ուր տուն իինի սպանիր:

Ամբըրեն կը տանի, կըսը. – Վըրե՞ նա մարթ մա տան սպա-  
նիցիքյ:

Կճիկն էլ Ամբըրին կըսը. – Ա.Ն տարըն նա մարթ սպանվիր,  
ինչ խավե խեծիլ էլավ:

Ամբըրեն կը մընա շեվար:

Կըսը. – Իս գյըտի՞մ՝ խավե խեծիլ իի՞վն ը իլիր, օր  
անցկուն ը, խին ը:

Կըսը. – Խին խաշիվ ը: Գյընա՛ քիւ տուն:

Տըռան տըրկիցն էլ կըսը. – Օր տա նա մարթ կորսավ, իսն էլ  
գիւղութին տ'անիմ, Ամբըրեն պան չկանա խսպաթ անի վար ծը:

Կերթա, համա գաղտիկ մաքյի կը պիրի, ինքյ, ուր կճիկ կը  
զենին, կուտին:

Պառվու լաճն էլ գիրծվոր կիլնը:

Պառվու խարս կը գա մատ ուր իրիկ, կըսը. – Աստված քյը  
տուն ավոց, մինքյ գործ անելով չընքյ կարը շախվը: Խի՞ս՝ նա  
տըրկըցը մարթ կերթա, մաքյի կը պիրը, կը կըտըռտին, կանին  
խուրուվու, քյեֆ կանին:

Ա.Ն էլ մըքիւքյ կը թալը, կըսը. – Տալ չակախած, տալ  
չակախած:

Կը մընա եօրըմ, երկու: Կճիկ կիլնը, կերթա հախափւր ծըրիւ,  
կը տեսնա՛ զավթիեքյ թահրանված վար մարթիւ տըռան, գտըրկից  
պըռնած կը տանին, կախին: Ա.Ն էլ էլավ, համա լազ իրի տուն:

Եսաց. – Իրիկ, էն աղեկ տու չը գացիր, գիւղութին չարիր:  
Վոլա, մի տըրկից պըռնած, կը տանին կախին:

Ա.Ա էլ մըքհւեյ կը թալը, կըսը. – Դիրիս ակախած, դիրիս ակախած:

Կը մընա, մա գյեղին խարսնիսըմ կիլնը: Պառվու լաճն էլ կը կանչին խարսնիս:

Պառվու լաճ ինչ կերթա, կը նըստըցցին սըրախ՝ վար պաղ թիրվան: Համա մեկ-մեկ կըրակ կը կընդըվը թիներ վե, համա զա չէ:

Կը տեսնա՝ կը զարկին, կը խաղան: Ախքատ մարթ մ'էլ կը պիրին, կը տընին խատ պառվու լածուն, վար թիրվան:

Փեսի քիւր կըսը. – Վոլա՛, իս տ'էլնիմ, երթամ, նա էրկու ֆըռկարեն թաղկիմ հանդիւց:

Փեսեն էլ կըսը. – Երկու-իրիք ափրախ տի՛ կուռեն, տի՛ հեռձիվրիիր, քըխ ուտին, էլնին, յան:

Պառվու լաճ զուր պաժին կը տա ախքյըտին, կըսը. – Տիւ կի՛, տիւ միխսք իս:

Փեսը քիւր ի՞նչըխ կանը, ալ չըն իլնը վիր:

Կըսին. – Ալ դի՞ւր տ'երթանք, գյիշիր ը:

Կիլնը, կերթա, փեսին կըսը. – Ի՞նչըխ կանիմ, թիրվընեն չըն իլնը վե նա ֆըռկարեք:

Մեկէլ քիւրն էլ կըսը. – Սալավ, իս յամ, թաղկիմ, տիւ ս' կանա:

Ա.Ա քիւրն էլ կիլնը, ուր աղեկ խալավրիիր հագին կը գա՛:

Ինչ կը գա, համա կը տիկոցըցը, կըսը. - Յամա՞ն, իս ցըռտու մեռա, իս կը տիկոցըցիմ:

Պառվու լաճ կըսը. – Ըստա տեղ չըկա՛ տիւ տաքյընաս, ըստա ցուռտ ը:

Կնիկ կըսը. – Վոլա՛, իս տը նստիմ վար թիրվան, տաքյընամ:

Կնիկ ուր ոռ կը տընը մա թիրվան, կը նըստը:

Մըղդարըմ կը մնա, պառվու լաճ կըսը. – Վոլա՛, մըշախուտ կը գա՛:

Պառվու լաճ կըսը ախքյըտին. – Մընչը՛, խաբար մի՛ տա:

Հա կըրակ կը վատանա, մուխ կիլնը: Չուր խարս կակախը, խարսը ոռ կիրիցը մա թիրվան, կութնին, չուխեն կը մըրկը: Կը մընա չըփլախ:

Պառվու լաճ կիլնը, ախքյըտի ծեռ կը պըռնը, կիլնը խաղ:

Ինչ կիլնը խաղ, կնիկ կը ճռվա. – Աստծու սիրուն իլնը, մի  
ոռ մըրկավ:

Կիլնը տէւս թիրվընեն: Խարսնըսի մարթիր կը թափին  
վերա, կըսին. – Կնիկ, պան չըկա:

– Չէ՛, – կըսը, – նա խարսը վուտ խերով չէր, վար մի չէրը:

Պառվու լաճ, ախքատ ուրախութնե շաշ կիլնին: Ինչ անուշ  
յըմակ կա, կը տան անունց, կըսեն. – Դե՛, կերե՛քյ, քըսա արե՛քյ՝  
մըհա ի՞նչըխ էլավ՝ անու ոռ իրիցավ:

